ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆԻՆ

Գեղարքունիքի մարզպետարան
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲԱԺԻՆ
28 12 2023 թ.
Մուտք թիվ 01/4560

# ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

Հարգելի՛ պարոն Խլղաթյան

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ»-ի և «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ-ի միջև 2023թվականի սեպտեմբերի 7-ին կնքված «ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23» ծածկագրով ապրանքների մատակարարման գնման պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է մարկերով գրելու համար կախովի գրատախտակների մատակարարման պարտավորությունը՝ համաձայն Պայմանգրի անբաժանելի մաս կազմող N1 հավելվածով սահմանաված Տեխնիկական բնութագրի պահանջներին:

Ընկերությունը խախտելով Պայմանագրով սահմանված պարտավորությունները, Պայմանագրով նախատեսված ժամկետում չի մատակարարել ապրանքները:

Պատվիրատուի ղեկավարի 24.11.2023թ. թիվ 02//8864-2023 գրությամբ ծանուցվել է մասնակցին՝ ապրանքները մատակարարել մինչև դեկտեմբերի 5-ը, սակայն «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ-ի կողմից չի մատակարարվել ապրանքները:

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ | 74438187 | Ք. Վարդենիս Մռավյան 14 | Պայմանագրով նախատեսված ժամկետում չի մատակարարել ապրանքները | 2.1.1-րդ կետի և 2.1.7-րդ կետի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման | - | ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23-1<br><br>Հրաման N---<br>ամսաթիվ |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | մասին» Հայաստանի Հանրապետությ ան օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով | | |

Ուստի, ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և 2-րդ մասի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով ու հիմք ընդունելով **ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23** ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի պահանջը՝ խնդրում եմ Ձեր համաձայնությունը 2023թ. դեկտեմբերի 28-ից չմատակարարված ապրանքների մասով միակողմանի լուծել պայմանագիրը: Մատակարարի բանկ ներկայացնել պահանջ վճարել չմատակարարված ապրանքների պայմանագրով սահմանված պայմանագրի և որակավորման ապահովման գումարները, ինչպես նաև մատակարարից պահանջել վճարել Պայմանագրի 6,2 կետով սահմանված տույժը՝

Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մակատարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 /զրո ամբողջ զրո հինգ հարյուրերրորդական/ տոկոսի չափով՝

1. Պայմանագրի գինը 3.090.000 ՀՀ դրամ
2. Մատակարարված է 0 ՀՀ դրամ
3. Պետք է մատակարարվեր 3.090.000 ՀՀ դրամ
4. Որակավորման ապահովում 463.500 ՀՀ դրամ
5. Պայմանագրի ապահովում 309.000 ՀՀ դրամ
6. Տույժ չմատակարարված ապրանքների գումարի համար 26.265 ՀՀ դրամ /06.12-28.12.2023թ.ի համար -17 աշխատանքային օր/:

Միաժամանակ առաջարկում ենք դիմել ՀՀ ֆինանսների նախարարություն «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառել համար:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի

ԿՄՍ վարչության պետ՝ Կարեն Ջաղյան

28.12.2023թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

**«ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի արդյունքում կնքված պայմանագրի միակողմանի լուծելու վերաբերյալ հանձնաժողովի նիստ**

***Գավառ, Կենտրոնական հրապարակ 7***

**«28» «12» 2023թ.**
**ժ 09:45**

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Կարեն Ջազյան
Հանձնաժողովի անդամներ Ջանիկ Բազեյան, Գեղամ Չարվադարյան, Արսեն Մելքոնյան, Վարդինե Դադոյան
Հանձնաժողովի քարտուղար՝ Արթուր Բադեյան

1. Օրակարգում

«ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմ»-ի և «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ-ի միջև 07.09.2023թ. կնքված **ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23** ծածկագրով պայմանագիրը միակողմանի լուծելու հարցը:

Ստորաբաժանման ղեկավարը նշեց, որ «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները: Ուստի, ղեկավարվելով **ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23** ծածկագրով պայմանագրի 2.1.7 կետի և ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա/ ենթակետի և 2-րդ մասի պահանջներով, առաջարկում ենք միակողմանի լուծել պայմանագիրը և «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

1. Ընդունվել է որոշում կողմ – 5, դեմ – 0

Նախագահ՝ ____________________ Կ. Ջազյան

Անդամներ՝ ____________________ Ջ. Բազեյան

____________________ Գ. Չարվադարյան

____________________ Ա. Մելքոնյան

____________________ Վ. Դադոյան

Քարտուղար՝ ____________________ Ա.Բադեյան

# ПРОТОКОЛ № 4

Заседание комиссии по одностороннему расторжению договора, заключенного по итогам процедуры электронного аукциона с кодом «ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23»

***Гавар*** **, Центральная площадь** ***7*** **«28» «12» 2023թ.**

час **09:45**

Участие были :
Комиссии председатель Карен Зазян
Комиссии члены Джаник Базеян , Гегам Чарвадарян , Арсен Мелконян , Вардине Дадоян
Комиссии Секретарь : Артур Бадеян

1. На повестке дня

Между аппаратом губернатора Гегаркуника РА» и ЧСП «Маргарит Гарибян» 09.07.2023г. вопрос об одностороннем расторжении договора, заключенного по кодексу Республики Армения ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23.

Председатель управления отметил, что ЧСП «Маргарит Гарибян» нарушило условия поставки, предусмотренные контрактом. Поэтому руководствуясь требованиями пункта 2.1.7 договора с кодом ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23 и требованиями статьи 6, части 1, пункта 6, подпункта 6 и части 2 РА» Закона о закупках», предлагаем в одностороннем порядке расторгнуть договор и включить ПЖ «Маргарит Гарибян» в список участников, не имеющих права участвовать в процессе закупок.

1. Принято решение: за – 5, против – 0.

Председатель : ________________________ К. Зазян

Члены : ________________________ Дж. Базеян

________________________ Г. Чарвадарян

________________________ А. Мелконян

________________________ В. Дадоян

Секретарь : ________________________ _ А. Бадеян

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
# ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ


ք. Գավառ , Կենտրոնական հրապարակ N 7
Հեռ. 060650035
Կայք gegharkunik.mtad.am
Էլ. փոստ gegharkunik@mta.gov.am


N 02/18864-2023
24 նոյեմբեր 2023թ.

«ՄԱՐԳԱՐԻՏ ՂԱՐԻԲՅԱՆ Ա/Ձ»-Ի
ՏՆՕՐԵՆ ՄԱՐԳԱՐԻՏ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ տիկին Ղարիբյան

Խնդրում եմ մինչև 2023 թվականի դեկտեմբերի 5-ը ապահովել ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ – 31/23 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի արդյունքում «Մարգարիտ Ղարիբյան» Ա/Ձ-ի և ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի միջև 2023 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված N ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23-1 պայմանագրով ստանձնած պարտավորությունները, այն է՝ մատակարարել 206 հատ մարկերով գրելու համար գրատախտակները:

Восстановимая подпись

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

Հարգանքներով՝

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Կատարող՝ Կարեն Ջաղյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

N 1190-Ա «28» դեկտեմբերի 2023թ.

# Հ Ր Ա Մ Ա Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԵՎ «ՄԱՐԳԱՐԻՏ ՂԱՐԻԲՅԱՆ» ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋ ՄԻՋԵՎ ԿՆՔՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԴՊՐՈՑՆԵՐԻՆ ՄԱՐԿԵՐՈՎ ԳՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԿԱԽՈՎԻ ԳՐԱՏԱԽՏԱԿՆԵՐ ՄԱՏԱԿԱՐԱՐԵԼՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 7-Ի N ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի (այսուհետ՝ Գնորդ) և «Մարգարիտ Ղարիբյան» Անհատ Ձեռնարկատիրոջ (այսուհետ՝ Մատակարար) միջև 2023 թվականի սեպտեմբերի 7-ին կնքված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի դպրոցներին մարկերով գրելու համար կախովի գրատախտակների մատակարարման N ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23 ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 2.1.7-րդ կետի պահանջը և հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթական և մշակութային պատասխանատու ստորաբաժանման ղեկավար՝ Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի կրթության,

մշակույթի և սպորտի վարչության պետ Կարեն Չալյանի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի N Ն/ 4560-23 զեկուցագիրը

| Մասնակցի | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| անվանումը | ՀՎՀՀ/ֆիզ. անձի դեպքում հանրային ծառայության համարանիշը | գործունեության հասցեն | գնումների գործընթացին մասնակցելու պայմաններին չբավարարելու իրավական հիմքը | | | ցուցակում ներառելու մասին պատվիրատուի ղեկավարի կայացրած որոշման ամսաթիվը և գնման ընթացակարգի ծածկագիրը |
| | | | խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը | խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը | որպես ընտրված մասնակից հրաժարվել կամ զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից | |
| «Մարգարիտ Ղարիբյան» ԱՁ | 74438187 | Ք. Վարդենիս Մռավյան 14 | Պայմանագրով նախատեսված ժամկետում չի մատակարարել ապրանքները | 2.1.1-րդ կետի և 2.1.7-րդ կետի «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի դրույթներով | - | ՀՀ ԳՄ ԷԱՃԱՊՁԲ-31/23-1<br>Հրաման N 1190-Ա 28.12.2023թ. |

**հրամայում եմ՝**

1. **Միակողմանի լուծել պայմանագիրը**

2. **Պայմանագրի 6.2 կետով սահմանված դրույթների համաձայն**

- **Գանձել տույժ չմատակարարված ապրանքների գումարի համար 26.265 ՀՀ դրամ /06.12-28.12.2023թ.ի համար -17 աշխատանքային օր/**
- **Մատակարարի բանկ ներկայացնել պահանջ վճարել չմատակարարված ապրանքների պայմանագրով սահմանված**

1. **Որակավորման ապահովում 463.500 ՀՀ դրամ**

2. Պայմանագրի ապահովում 309.000 ՀՀ դրամ

3. Գրավոր սույն հրամանի պատճեն տրամադրել ՀՀ ֆինանսների նախարարությանը և մասնակցի կողմից 2-րդ կետում նշված գումարների չվճարման դեպքում ձեռնարկել համապատասխան քայլեր գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար :

28.12.2023

X

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Подписано: KHLGHATYAN SEVAK 4007580049

ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

ք. Գավառ